ՖԻՆՔԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

2026 թ. նոյեմբերի 1–20-ը • Black Friday 2026

1. Հիմնական հասկացություններ

1.1. **Կազմակերպիչ**՝ «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ

1.2. **Խաղարկություն**՝ կազմակերպչի կողմից իրականացվող գովազդային խրախուսական միջոցառում, որի շրջանակում պատահականության սկզբունքով ընտրվում են հինգ հաղթողներ։

1.3. **Մասնակից**՝ սույն կանոններով սահմանված բոլոր պայմաններին համապատասխանող հաճախորդ։

1.4. **Մրցանակ**՝ 50,000 ՀՀ դրամ անվանական արժեքով նվեր քարտ։ Գումարը չի ներառում հարկերը, վերջինս փոխանցվում է ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ -ի կողմից առանձին։

1.5. **Ժամկետ**՝ 2026 թ. նոյեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 20-ը ներառյալ (Երևանի ժամանակով)։

1.6. **Կանոններ**՝ սույն փաստաթղթով սահմանված մասնակցության, հաղթողների ընտրության և մրցանակների հանձնման պայմանները։

2. Ընդհանուր դրույթներ

2.1. Խաղարկությունը կազմակերպում է «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն՝ Black Friday 2026 արշավի շրջանակում։

2.2. Խաղարկությանը մասնակցելով՝ մասնակիցն ընդունում է սույն կանոնները։

2.3. Խաղարկությանը մասնակցության համար առանձին վճար չի գանձվում։ Վարկի տրամադրման պայմանները սահմանվում են համապատասխան վարկային պայմանագրով։

2.4. Սույն կանոնները հրապարակվում են կազմակերպչի պաշտոնական կայքում։

3. Խաղարկության պայմաններ

3.1. Խաղարկությանը կարող են մասնակցել այն չափահաս ֆիզիկական անձինք, ովքեր 2026 թ. նոյեմբերի 1–20-ը «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ից ստացել են վարկ և բավարարում են սույն կանոններին։

3.2. Մասնակցության հիմք է համարվում վարկի փաստացի տրամադրումը, այլ ոչ միայն հայտի ներկայացումը։

3.3. Մասնակիցների ցանկը ձևավորվում է կազմակերպչի համակարգերում առկա տվյալներով։

3.4. Խաղարկությանը մասնակցելու են բոլոր այն հաճախորդները, ովքեր վարկավորվել են նոյեմբերի 1-20-ը ընկած ժամանակահատվածում և հանդիսանում են ակտիվ վարկառուներ։

4. Խաղարկությանը մասնակցելու պայմաններ

4.1. Մասնակիցը պետք է համապատասխանի 3-րդ բաժնի պահանջներին և ունենա նույնականացման համար բավարար տվյալներ։

4.2. «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի աշխատակիցները չեն կարող մասնակցել խաղարկությանը։

4.3. Մինչ խաղարկության անցկացումը հեռացվելու են բոլոր կրկնվող և/կամ չհամապատասխանող տվյալները։

5. Մրցանակներ

5.1. Խաղարկվում է 5 (հինգ) նվեր քարտ՝ յուրաքանչյուրը 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ արժողությամբ։ Ընդհանուր մրցանակային ֆոնդը 250,000 ՀՀ դրամ է (առանց հարկերի)։

5.2. Յուրաքանչյուր հաղթող ստանում է մեկ նվեր քարտ։

5.3. Նվեր քարտերի թողարկողը, օգտագործման վայրերը, վավերականության ժամկետը և սահմանափակումները սահմանվում են համապատասխան պայմաններով։

5.4. Մրցանակները կանխիկ գումարով չեն փոխարինվում։

5.5. Մրցանակների հարկային պարտավորությունները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով։

6. Խաղարկություն

6.1. Խաղարկությունը նախատեսվում է անցկացնել 2026 թ. նոյեմբերի 23-ին, ժամը՝ 15:00-ին՝ FINCA Հայաստանի Facebook-ի պաշտոնական էջի ուղիղ եթերում։

6.2. Հինգ հաղթողներն ընտրվում են պատահականության սկզբունքով՝ իրավասու մասնակիցների նախապես հաստատված ցանկից։

6.3. Նույն անձը չի կարող երկրորդ անգամ ճանաչվել հաղթող։

6.4. Ընտրության եղանակը, վերահսկման և արձանագրման կարգը նախապես հաստատվում են կազմակերպչի կողմից։

6.5. Ուղիղ եթերում չեն հրապարակվում մասնակիցների ամբողջական հեռախոսահամարները կամ այլ անձնական տվյալներ։

6.6. Հաղթող մասնակիցը խաղարկության առցանց ամփոփումից հետո տեղեկացվում է Կազմակերպչի կողմից՝ հեռախոսազանգի միջոցով։

6.7. Տեխնիկական խափանման դեպքում խաղարկության ընթացքը փաստաթղթավորվում է, և որոշվում է շարունակության թափանցիկ կարգը՝ պահպանելով արդեն վավեր ընտրված արդյունքները։

6.8. Խաղարկության արդյունքները գրանցվում են արձանագրությամբ։

7. Լրացուցիչ դրույթներ

7.1. Մրցանակը տրամադրվում է անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելուց և վարկառուի տվյալների հետ համադրելուց հետո։

7.2. Հաղթողը մրցանակը ստանում է կազմակերպչի հետ համաձայնեցված վայրում և ժամկետում։

7.3. Հաղթողը պարտավորվում է տալ իր համաձայնությունը՝ լուսանկարի, տեսանյութի կամ անվան հրապարակման համար։

7.4. Մասնակիցների տվյալները մշակվում են միայն իրավաչափ նպատակներով և անհրաժեշտ ծավալով՝ ՀՀ օրենսդրության համաձայն։